## Միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների դրամաշնորհներ

## 8900-2023-01

### Հարցեր և պատասխաններ. Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն

| | |
|---|---|
| Կարող ենք արդյո՞ք դրամաշնորհի շրջանականերում ձեռք բերել տրբի տեսակավորման սարքավորումներ, իսկ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունր իրականացնել մեր համայնքի մասնագետների կողմից: | Հայտարարված դրամաշնորհային մրցույթի նպատակն է տրամադրել դրամաշնորհներ **միայն** տեխնիկատնտեսական ուսումնասիրություն իրականացնելու համար: Այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում ընտրված համայնքներին ԵԽ-ը կտրամադրի **դրամաշնորհ** զուտ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն իրականացնելու համար: |
| Հայտադիմումի 9-րդ կետում *(Հայտատուի մասնագիտական և գործառնական կարողությունները)* և Աշխատանքային պլանի «Պատասխանատու անձ» բաժնում նշվո՞ւմ են միայն հայտատու համայնքի աշխատակազմի աշխատակիցների անունները, թե՞ նաև համագործակցող համայնքի: | Ե՛վ Հայտադիմումի 9-րդ կետում *(Հայտատուի մասնագիտական և գործառնական կարողությունները)* և Աշխատանքային պլանի «Պատասխանատու անձ» բաժնում նշվում են **միայն** հայտատու համայնքի աշխատակազմի աշխատակիցների անունները: |
| Դիմում-հայտերի ներկայացման հրավերում «Ինչպես դիմել» հատվածում նշված են դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերր՝ հավելվածների տեսքով: Հավելված 4-ր (միայն տեղեկատվության համար), ինչպես հասկանալի է, այս փուլում անհրաժեշտ չէ: Իսկ ո՞ր փուլում այն անհրաժեշտ կլինի և ո՞ր կետերին պետք է առավել ուշադրություն դարձնել: | Այո, Հավելված IV-ր՝ Դրամաշնորհային պայմանագրի ձևանմուշր, տրամադրվում է միայն տեղեկատվության համար: Այն անհրաժեշտ չէ այս փուլում և անհրաժեշտ կլինի րնտրված համայնքի հետ պայմանագիր կնքելու ժամանակ միայն: Պայմանագրի բոլոր կետերն էլ կարևոր են: |

| | |
|---|---|
| Հրավերում նշված է ծրագրի իրականացման վերջնաժամկետը 2024թ.-ի հուլիսի 31-ը, որը փոքր ինչ շփոթմունք է առաջացրել: Այստեղ մեխանիկորեն հասկացվում և ենթադրվում է հիմնական ծրագրի հայտ, այլ ոչ թե միայն տեխնիկատնտեսական ուսումնասիրության առանձին դրամաշնորհի: Ես, որպես հանդիպման մասնակից, մտածել եմ, որ ուսումնասիրությունը դա ծրագրի մի բաղադրիչ է, որը պետք է ներկայացված լիներ դիմում-հայտի հրավերում՝ որպես առաջին փուլ: | Հայտարարված դրամաշնորհային մրցույթը ենթադրում է **միայն** տեխնիկատնտեսական ուսումնասիրություն իրականացնելու համար դիմում-հայտ: Այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում ընտրված համայնքներին ԵԽ-ը կտրամադրի **դրամաշնորհ՝** զուտ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունն իրականացնելու համար:<br><br>Հետևաբար, նշված ժամկետը՝ 6 ամիսը, լիովին բավարար է տեխնիկատնտեսական ուսումնասիրություն իրականացնելու համար:<br><br>Բուն միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության ուղղված ծրագրերի դիմում-հայտերի դրամաշնորհային մրցույթը կհայտարարվի հաջորդ տարի: Այն կունենա դիմում-հայտի ուրիշ ձևանմուշ: |
| Մենք ունենք հարևան 5 համայնքներ, որոնց հետ առանձին-առանձին ցանկանում ենք մասնակցել հրավերին: Սակայն, Ապարանը, որպես գլխավոր դիմումատու, դիմելու է Նաիրի համայնքի հետ: Մնացած 4 համայնքները՝ Ծաղկահովիտ, Ալագյազ, Աշտարակ և Ծաղկաձոր /սահմանակից է Ծաղկունյաց լեռնաշղթայով, Հանքավան-Ապարան 14 կմ/, հանդիսանալու են, որպես գլխավոր դիմումատուներ: Այստեղ խնդիր ունե՞նք, թե՞ ոչ: | Հայտարարված դրամաշնորհային մրցույթը ենթադրում է **մեկ դիմումատու**: Այն նաև ենթադրում է, որ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը պետք է վերաբերելի լինի միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության որևէ ծրագրի:<br><br>Նույն անվանակարգում դիմումատուն կարող է դիմել մեկ տեխնիկատնտեսական ուսումնասիրության ծրագրի առաջարկով: Սակայն այդ նույն դիմումատուն / համայնքը կարող է հանդես գալ, որպես միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության գործընկեր այլ դիմումատուների դիմում-հայտերում: |
| Մենք որպես հանդիպման մասնակիցներ, որքանո՞վ ենք իրավասու խոսել ծրագրի այն հատվածի մասին, որը նախատեսվում է մեկնարկել տեխնիկատնտեսական ուսումնասիրության դրամաշնորհից հետո: | Այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում ավելի լավ է կենտրոնանալ **միջհամայնքային** կամ **անդրսահմանային համագործակցության ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների մշակման**:<br><br>Սակայն դիմում-հայտի մեջ պետք է նշել, թե ինչ ծրագրի համար եք |

| | |
|---|---|
| | ցանկանում կատարել տեխնիկատնտեսական ուսումնասիրություն և որն է վերջնական նպատակը: |
| 10% համայնքային ներդրումը կատարվո՞ւմ է գլխավոր դիմումատուն, թե՞ այստեղ նույնպես սահմանափակում չունենք, ինչպես կպայմանավորվեն համայնքները: | Քանի որ այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում նախատեսվում է, որ դիմում-հայտը պետք է ներկայացնի **մեկ դիմումատու**, հետևաբար, այդ նույն դիմումատուն / համայնքն էլ պետք է կատարի ներդրում դրամաշնորհի ընդհանուր գումարի առնվազը 10%-ի չափով:<br><br>Ներդրումը կարող է լինել ինչպես դրամային, այնպես էլ բնաիրային ձևով: |
| Հայտադիմումի մեջ *Հայտատու համայնք, Կոնտակտային տվյալներ, Բանկային տվյալներ, Դրամաշնորհային ծրագրերի իրականացման նախկին փորձ* բաժիններում նշվո՞ւմ է երկու համայնքների տվյալներ: *(միջհամայնքային համագործակցություն)* | Քանի որ այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում նախատեսվում է, որ դիմում-հայտը պետք է ներկայացնի **մեկ դիմումատու**, հետևաբար, այդ նույն դիմումատուի տվյալներն էլ պետք է ներկայացվեն: |
| Արդյո՞ք հայտադիմումի մեջ ստորագրության մասում ստորագրում և պաշտոնական կնիք են դնում երկու համայնքների ղեկավարներն էլ: *(միջհամայնքային համագործակցություն)*: | Քանի որ այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում նախատեսվում է, որ դիմում-հայտը պետք է ներկայացնի **մեկ դիմումատու**, հետևաբար, այդ նույն դիմումատուն / համայնքի ղեկավարը պետք է ստորագրի և դնի համայնքի պաշտոնական կնիքը դիմում-հայտի ստորագրության բաժնում: |
| Միջհամայնքային համագործակցության դեպքում 10% համայնքային ներդրումը կատարվո՞ւմ են 2 համայնքը միասին, թե՞ ամեն համայնքն իր հերթին 10%: | Քանի որ այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում նախատեսվում է, որ դիմում-հայտը պետք է ներկայացնի **մեկ դիմումատու**, հետևաբար, այդ նույն դիմումատուն կատարի ներդրում դրամաշնորհի ընդհանուր գումարի առնվազը 10%-ի չափով:<br><br>Ներդրումը կարող է լինել ինչպես դրամային, այնպես էլ բնաիրային ձևով: |
| Ո՞վ կարող է նշանակվել պատասխանատու անձ: Միայն համայնքապետարանի աշխատողներից որևէ մե՞կը, թե՞ ինչ-որ երրորդ կողմ: *(միջհամայնքային համագործակցություն)*: | Պատասխանատու անձ կարող է նշանակվել միայն **համայնքապետարանի աշխատակիցներից մեկը**, ցանկալի է ծրագրերի իրականացման կամ տնտեսական զարգացման համար պատասխանատու աշխատակիցը: |

| | |
|---|---|
| Արդյո՞ք տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը պետք է անցկացվի ուղղակիորեն համայնքապետարանների աշխատակիցների կողմից, թե հնարավոր է դա հանձնարարել մի երրորդ կողմի (օրինակ՝ ՀԿ-ի կամ տուրիստական գործակալության կամ այդ ոլորտի մասնագետի): *(միջհամայնքային համագործակցություն):* | Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը պետք է իրականացվի համայնքապետարանների աշխատակիցների և դրսի փորձագետների կողմից համատեղ: Այսինքն, հնարավոր է ուսումնասիրության որոշ մասեր հանձնարարել **երրորդ կողմին** ոլորտի մասնագետներին կամ մասնագիտացված կառույցին: |
| Միջհամայնքային համագործակցության ուսումնասիրության դիմում-հայտը ներկայացվելու է համատեղ, թե՞ ոչ:<br><br>Եթե՝ այո, ապա համայնքներից յուրաքանչյուրը կարո՞ղ է հետագա դրամաշնորհում առանձին հայտ ներկայացնել: | Հայտարարված դրամաշնորհային մրցույթը ենթադրում է **մեկ դիմումատու**: Այն նաև ենթադրում է, որ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը պետք է վերաբերելի լինի միջհամայնքային կամ անդրսահմանային համագործակցության որևէ ծրագրի:<br><br>Հաջորդ դրամաշնորհային մրցույթին դիմում-հայտ կարող է ներկայացնել յուրաքանչյուր խոշորացված համայնք: |
| Հայտի ձևանմուշում տվյալներ պետք է լրացվեն միայն մեկ համայնքի մասին: Կարծում եմ, որ միջհամայնքային համագործակցության դեպքում համագործակցող երկու համայնքների մասին էլ տվյալներ պետք է լրացվեն հայտում: Խնդրում եմ այս պահը պարզաբանեք: | Քանի որ այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում նախատեսվում է, որ դիմում-հայտը պետք է ներկայացնի **մեկ դիմումատու**, հետևաբար, այդ նույն դիմումատուի տվյալները պետք է ներկայացվի: Իսկ դիմում-հայտում պետք է նշվի, թե որոնք են Ձեր գործընկեր համայնքները, և թե ինչպես եք **համատեղ** սահմանել տեխնիկատնտեսական ուսումնասիրության **կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակները**: |
| Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը ո՞ր փուլում պետք է նախատեսել. տեխնիկատնտեսական հիմնավորման, թե հաջորդ: | Եթե նախագծանախահաշվային փաստաթղթերը արդեն առկա են, կարող եք դիմում-հայտում նշել դրա մասին: Եթե դեռ ոչ, ապա կարող եք դրանց մշակումը նախատեսել տեխնիկատնտեսական ուսումնասիրության շրջանակում: |
| Համայնքի ներդրումը արդյո՞ք միայն հայտատու համայնքն է իրականացնելու, թե՞ համագործակցող համայնքը ևս:<br><br>Եթե երկու համայնքներն էլ պետք է ներդրում կատարեն, տեխնիկապես ո՞նց պետք է դա կազմակերպվի: | Քանի որ այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում նախատեսվում է, որ դիմում-հայտը պետք է ներկայացնի **մեկ դիմումատու**, հետևաբար, այդ նույն դիմումատուն / համայնքն էլ պետք է կատարի ներդրում դրամաշնորհի ընդհանուր գումարի առնվազը 10%-ի չափով:<br><br>Ներդրումը կարող է լինել ինչպես |

| | |
|---|---|
| | դրամային, այնպես էլ բնաիրային ձևով: |
| Հարց 1-ը վերաբերում է ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ-ի համայնքապետարան կետին, այդ դաշտում պե՞տք է լրացվի երկու համայնքապետարանների անունը, թե՞ համայնքները պետք է ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ-ը ներկայացնեն առանձին աղյուսակներով: | Քանի որ այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում նախատեսվում է, որ դիմում-հայտը պետք է ներկայացնի **<u>մեկ դիմումատու</u>**, հետևաբար, այդ նույն դիմումատուն / համայնքն էլ պետք է ներկայացնի աշխատանքային պլանը:<br><br>´´Համայնքապետարան´´ դաշտում պետք է նշել մենակ այդ մեկ դիմումատուի / համայնքի անունը: |
| Հարց 2-ը վերաբերում է բյուջեին: Անի համայնքի հետ նախատեսում ենք վերակառուցել ոռոգման համակարգ: Տեխնիկատնտեսական հիմնավորման մեջ պետք է նախագծեր և դրա պետական փորձաքննություն, ինչպես նաև հողերի ագրոքիմիական բաղադրության մասին ծառայություններ պատվիրել, սակայն ֆինանսական բաժնի կետերում չեմ գտնում դրան համապատասխան հոդվածները: | Եթե խոսքը գնում է փորձագետներին/ խորհրդատուներին ծրագրում ընդգրկելուն, ապա նախատեսված ծախսերը պետք է մուտքագրել Բյուջեի նախահաշվի ´´1.2. ´Փորձագետներ/ Խորհրդատուներ´´ տողում: Եթե խոսքը գնում է մասնագիտացված կառույցի կամ լաբորատորիայի մասին, ապա նախատեսված ծախսերը պետք է մուտքագրել Բյուջեի նախահաշվի ´´5. Այլ ծախսեր և ծառայություններ´´ ենթաբաժնում: |
| Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների ծրագրի շրջանակում ցանկանում ենք լուծել թափոնների կառավարման և բնապահպանական բաղադրիչով հետազոտական խնդիրներ:<br><br>Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ գործընկեր համայնքի հետ կապված, ինչպե՞ս նաև խնդրում եմ մանրամասնեք գործընկեր համայնքի ներգրավվածությունը ծրագրում՝ ֆինանսական տեսանկյունից: | Քանի որ այս դրամաշնորհային մրցույթի շրջանակում նախատեսվում է, որ դիմում-հայտը պետք է ներկայացնի **<u>մեկ դիմումատու</u>**, ապա գործընկեր համայնքի հետ կապված փաստաթղթեր հիմաանհրաժեշտ չեն:<br><br>Ֆինանսական տեսանկյունից էլ միայն այդ նույն դիմումատուն / համայնքը պետք է կատարի ներդրում դրամաշնորհի ընդհանուր գումարի առնվազը 10%-ի չափով: |